



Դ. Վարուժանի պահանջով յուշատախտակը (82x55 հրդմ.) - Հեղ. Փրանսացի արձանագործ **Baron**

տրե՛ Մարտիկ, էլիզապեթ թագուհիի անունով եղբորդիստեղծեան Հիմնարկութեան ընդհ. Բարոսը՝ Արքայ Միսիթեան, Փրոֆ. Ֆէյտի, Կարապետ Փոլատեան, Կանտի համալսարանին մէջ Վարուժանի դասընկեր՝ Մաէս, «Քայիէ տիւ Սիւտ» տնօրէն՝ Ժան Պալար:

Արտասանուած են Վարուժանէն կտորներ, որոնք Փրանսերէնի թարգմանուած են Լիւք Անտրէ Մարտիկ կողմէ: Ամէնէն վերջ, բուն ծափերու մէջ համալսարանին տեսուչը բացած է պղնձէ յուշատախտակը:

Աւելի ուշ, Պրիւքսէլի մէջ, հայկական երեկոյթին ընթացքին, Հ. Սերոբէ Վրդ. Ազըլեան փառաբանած է Վարուժանի յիշատակը, սիր հանելով անոր անմահ դաստիարակներուն դերը: Մուրատեան Վարուժանէն չորս պատանիներ ապրումով արտասանած են Վարուժանէն յիշատակելի կտորներ, բուն ծափերու արժանանալով:

Ու հիմա Վարուժան կը շարունակէ ապրիլ Կանտի մէջ. այնտեղէն կը հսկէ նա

բոլոր այն սերունդներուն վրայ որոնք պիտի գան իր մօտ ուսանելու. կը հսկէ բոլոր հայութեան վրայ, մանաւանդ անոնց որ սփիւռքի մէջ կաշկանդուած, ենթակայ են բիւր վտանգներու օտարացումի. կը հսկէ նա, ու խրախոյս է միանգամայն ամէն հայու՝ իր այս փառաւոր յարութեամբ եւ անմահութեամբ. անմահութիւն, զոր այսուհետեւ պիտի դաւանին նոյնիսկ օտարները:

Եթէ երբեմն Հոռմի մէջ կանգնած էր հայու մը, ճարտասան իմաստասէր հայու մը արձանը, հիմա ալ կրնանք արդարօրէն հպարտ զգալ մենք զմեզ, Եւրոպայի ուսանողներէն, մշակոյթի ոստաններէն մէկուն մէջ տեսնելով նոյնպէս հայու մը քանդակը. քանդակը անոր, որ քանդակեց ու քանդակեց:

Նեմեսիսի հրաշապատում արձանագործը թող խօսի յաւէտ իր կեանքով, թող խօսի իր գործով ու նաեւ իր քանդակով՝ բոլոր սերունդներուն որ պիտի անցնին քիչ մը արբեանալով անոր շունչէն:

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԿՌՈՒՆԿՆԵՐ

Ձմեռուան կէսին արտասովոր է տեսնել կոռնկներ: Բայց ներկայ դարուս գիտական յառաջընթացի կողքին՝ տարօրինակ բան չկայ: Այո՛, իսկական կոռնկներ են մեզի համար, որ կը բանան մեր աշխարհի դադողները, կը հաղորդեն մեզի խաղրիկներ՝ այնտեղ եռացող կեանքին եւ նորանոր յառաջընթացի մասին:

Փրոֆ. Գագիկ Դաւթեան, Երեւանի Պետական Համալսարանի տեսչապետ (Ռեկտոր), առաջինն եղաւ այդ կոռնկներէն, որ Յունուար 30ին անակնկալօրէն այցելեց Ս. Ղալար: Արեւելոյ իրիկուն մըն էր. վերջալոյսի կարմիր շողերը սակայն բաւական եղան յիշատակի լուսանկար մըն ալ առնելու, վառքի քարափին:

Պատկանելի անձնաւորութիւն մըն էր. գեղուն ու խօսուն բնավորութեամբ՝ առաջին իսկ վայրկեանէն ցոյց տուաւ մեծ հետաքրքրութիւն ու գնահատումը Միսիթեան յարկին հանդէպ, եւ սիրով զոհացում տուաւ մեր անսպառ հարցումներուն՝ Հայաստանի մէջ ներկայիս աճող եւ յարաճող մշակութային ձեռնարկներու մասին:

Բանի մը օր առաջ Փրոֆ. Գ. Դաւթեան Փիլէնցի մէջ բանախօսած էր հայ-իտալ յարաբերութիւններու մասին. հրաւիրուած էր իտալեւուն մշակութային Միութեան կողմէ, իրեւ գլուխ՝ ուսական պատուիրակութեան: Փոքրիկ շեղում մը կատարելով իր ուղիին վրայ, անպատճառ ուղած էր այցելել Վենետիկի հայկական վանքը:

Մեծ հետաքրքրութեամբ այցելեց մանաւանդ մատենադարանն ու տպարանը. լուսանկարեց Աղթարքի 1512ի տպագրութեան մէկ քանի էջերը. մասնաւոր ուշադրութեամբ զննեց եւ յուզումով դարձուց մագաղաթեայ հին ձեռագիրներ, տեսնելով թէ ինչքան զուրկութեամբ կը պահուին Միսիթեան յարկին տակ, որ չու-

նենալով հանդերձ պետական կազմակերպութեան մը հսկայական միջոցները, ջանք չէ խնայած ի պահպանութիւն հայ դարաւոր արժէքներուն:

Փրոֆ. Գ. Դաւթեան իր հետ նուէր բերած էր կարգ մը հրատարակութիւններ, որոնց մէջ նաեւ Հ. Ղեւոնդ Ալիշանի Նըւազներէն կատարուած ծաղկաքաղ մը հանդերձ կենսագրական տուեալներով եւ ծանօթագրութիւններով. բերած էր նաեւ Հայաստանի գեղեցիկ տեսարաններու հրապուրիչ քարտեր, Պետական պատկերասրահի նկարներու վերարտադրութիւններու հաւաքածոն. ու նաեւ... հայկական արեւահամ քոնեաքէն շիշ մը:

Յուզուած էր վերջին պահուն, երբ փոքրիկ հիւրասրահութեամբ մը ուղեցնեց պատուել մեր շատ սիրելի հիւրը: Փոխադարձ սիրազեղ մաղթանքներ կատարեցինք, մշակութային նորանոր յառաջընթացներու, եւ աւելի եւս սերտ կապեր հաստատելու՝ գիտական ու գրական աւարելներու մէջ:

Նոյն իրիկունը, աւելի ուշ պահու, Փրոֆ. Գագիկ Դաւթեան այցելեց նաեւ Մուրատ-Ռաֆայէլեան Վարժարանը, հոն ալ գտնելով նոյն սրտաբաց եւ տաք ընդունելութիւնը:

Փրոֆ. Գագիկ Դաւթեան բազմաճանաչ ընտանիքի մը տասներորդ դաւակն է. իր մայրը յաճախ ըսած է իր փոքրիկ Գագիկի մասին. «Հայերս չորս Գագիկ թագաւոր ունեցած ենք. ասիկա հինգերորդը պիտի ըլլայ»: Այս Գագիկը ծնած ժողովրդապետ չըլլանի մէջ, ինքն ալ տեսակ մը թագաւոր է. Պետական Համալսարանի Տեսչապետն է:

Կը մաղթենք իրեն եւ իր Համալսարանին մշտապէս վերելք: Համալսարանը իր 11 մասնաճիւղերով եւ 5.000 աշակերտութեամբ ծաղկի յաւէտ ու ճոխանայ օրէ օր:



Փրոֆ. Գաղիկ Դաւթեան (ձախէն երկրորդը) Ս. Ղազարու մէջ

Եւ ինք Եւս, իր տարրալուծական մասնա-
ճիւղին մէջ պսակուի բիւր յաջողութիւն-
ներով:




Հազիւ երկու շաբաթ էր անցած եւ ա-
հա երկրորդ կողմէն մը Հայաստանէն:
Այս անգամ ունինք երիտասարդ Փրոֆ.
Սարգիս (Սերկէյ) Մ. Մերգելեան, հազիւ
երեսնամեայ, որ ներկայիս աշխարհի ա-
մենաքաջ թուարանագէտներէն մէկը նը-
կատուած է: Վերջերս հրաւիրուած է Ի-
տալիա, համբաւաւոր թուարանագէտ Ֆր.
Սեւերիի կողմէ, կարգ մը դասախօսու-
թիւններ տալու Հռոմի պետական համալ-
սարանին մէջ, մասնագէտ թեկնածունե-
րու համար. նիւթ ունեցած է «Մօտաւո-
րութիւնների տեսութիւնները՝ կոպուլեքս
տիրոյթով», հեղինակին բառերով:

Ախալքալաքցի է. աւարտած է Երեւանի
պետական Համալսարանը, 1948ին. քանի
մը տարի մասնագիտութիւն ըրած է Մոս-
կովա. իր ուսուցիչներն են Ակադեմիկոս
Արտաշէս Շահինեան եւ Կելարիչ, որոնց ա-
նունները մեծ երախտագիտութեամբ յի-
շեց: 1956ին ընտրուած է Երեւանի Գիտու-
թիւնների Ակադեմիայի իսկական անդամ:

Ունի մօտաւորապէս 25 աշխատութիւն-
ներ, որոնցմէ մէկ քանին անգլիերէնի ալ
թարգմանուած են 1951-1953 տարիներ-
ուն Միացեալ Նահանգներու մէջ: Գըլ-
խաւորներէն է, «Uniform approximation of
functions of a complex variable», որուն հա-
մար շահած է նաեւ Ստալինեան մրցանակ,
1952ին:

Ներկայիս ինք թղթակից անդամ է նաեւ
Ռուսական Գիտութիւնների Ակադեմիայի,
Եւ դասախօս Մոսկովայի Համալսարանին
մէջ:

Երեւանի մէջ ինք տնօրէնն է մաթեմա-
թիքական մեքենաներու Հաստատութեան
(Ինստիտուտ): Նոր Հաստատութիւն մըն
է ասիկա, որ օգտագործելով գիտութեան
վերջին տուեալները, ելեկտրոնային մե-
քենաներ կը պատրաստէ, որոնք թուարա-
նական բարդ հաշիւներ, քանի մը հազար
գործողութիւն կը կատարեն քանի մը
վայրկեանի մէջ. գործողութիւններ, ո-
րոնց համար ամիսներ պէտք էին այլա-
պէս. 1958ի վերջը պիտի աւարտի շինու-
թիւնը ամբողջ Սովետական Միութեան
ամէնէն կատարեալ եւ ամէնէն մեծ գոր-
ծիքներէն մէկուն:



Փրոֆ. Ս. Մերգելեան՝ Ուխտիս Գերպո՝ Արքեպի-
սկ Միխայիլեան վարդապետներու հետ, Ս. Ղազարու պարտէզին մէջ

Հայաստանի համար նորութիւն մըն է
այս Հաստատութիւնը, եւ Փրոֆ. Ս. Մեր-
գելեան չեղացեց թէ հայ երիտասարդ գիտ-
նականները մեծ խանդավառութեամբ նը-
ւիրուած են այս խոստումնալից գործին.
ամէն գիւրութիւն ունին համալսարանի
ուսանողները, իրենց հնարած գիտերը
անմիջապէս փորձի ենթարկելու, նոյն
Հաստատութեան փորձառական մասնա-
ճիւղին մէջ. ասով շատ արագ կը յառա-
ջագիւծէ գիտութիւնը եւ կրնանք ըսել՝ թէ
օրէ օր նորութիւններ երեւան կ'ելլեն, ոչ
միայն թուղթի վրայ, իրենց թուարանա-
կան տարադիւրսով, այլ արդէն իսկ մեքե-
նայի կը վերածուին:

Փրոֆ. Մերգելեան աւելի բախտաւոր
եղաւ քան իր նախորդը, քանի որ աւելի
տրամադրելի ժամանակ ունէր եւ քանի մը
օր մնաց Վենետիկ. միասին անցուցինք
հիանալի ժամեր. այդ օրերուն կը դուզա-
ղիպէր նաեւ Վարդանանց տօնախմբու-
թիւնը: Փրոֆ. Մերգելեան մանրամաս-
նօրէն պատեցաւ վառքի զանազան մասե-
րը. շատ փոքրիկ գտաւ մեր տպարանը,
համեմատութեամբ Պետհրատի հսկայա-
կան տպարանին. սակայն եւ այնպէս հիա-

ցաւ որ այդտեղէն լոյս տեսած են զրական
ու մշակութային հրաշակերտներ, որոնք
ստեղծած են մեր Վերածնունդը. «Հայաս-
տանի մեր ներկայ բանասէրները մեծ հիա-
ցում ու զնահատանք ունին այս Հաստա-
տութեան հանդէպ, ըսաւ նա, որ մեծ դեր
ունեցած է եւ ունի հայ իրականութեան
մէջ. հարկ է որ հետզհետէ աւելի տերտա-
նան մեր մշակութային փոխ-յարաբերու-
թիւնները, երկուստեք լայնօրէն օգտուե-
լու համար իրարմէ, ի նպաստ հայ գրին
ու զրականութեան»:

Փրոֆ. Մերգելեան ուղեց տեսնել մին-
չեւ անգամ պարտէզը. լուսանկարուցաւ
Պայրընեան ձիթենիներու ներքեւ. այցե-
լեց գերեզմանատունը, ուր կը հանգչին
Միխայիլեան մեծ բայց խոնարհ վաստա-
կաւորները՝ անչուք ու պարզ շիրիմներու
մէջ:

Անշուշտ չենք միջառուրեր իր համեստու-
թիւնը՝ եթէ քանի մը տող Եւս աւելցնենք
իր մասին, աւելի Եւս ծանօթացնելու հա-
մար մեր հասարակութեան:

Առիթն ունեցանք միասին այցելելու
նաեւ Վենետիկի մէջ գտնուող հայկական
իշատակները. Հայերու փողոցը, ուր կը

դտնուի նաեւ Հայոց Ս. Խաչ եկեղեցին: Ս. Մարկոսի տաճարին մուտքի պորտիւրէ սիւներուն վրայ կարգացինք հայատառ արձանագրութիւնները, Յովհաննէս, Գրիգոր, Եղիազար, հանդերձ առնթեր թրւականներով. բոլորն ալ 1500ի կամ 1600ի շրջանէն. յարգելի փրոֆէսորը շատ դարմանալի գտաւ այս երեւոյթը. հուսկ այցելեցինք նաեւ Կոռնարոյ թաղուհիին դերեմանը, Սան Սարգիստոր եկեղեցիին մէջ, եւ մուտքին մէջ ճրագի լոյսով կարգացինք «Թաղուհի Հայաստանի» բացատրութիւնը՝ հսկայ տապանաքարին վրայ:

Փրոֆ. Մերգելեան՝ Մուրադ-Ռաֆայէլեանի մէջ ալ հետաքրքրուեցաւ մեր աշակերտներով, նոյնիսկ անոնց ուսումնական մակարդակով, զոր բաւական բարձր գտաւ, մանաւանդ թուարանական մարդին մէջ. բարձրագոյն դասարաններու տուաւ քանի մը դասախօսութիւններ: Նոյնիսկ Փիլիքականով կայտառ եւ առոյգ գտաւ մեր հայորդիները:

Հակառակ իր երիտասարդ տարիքին, իսկապէս մեծ գիտնական մըն է Փրոֆ. Ս. Մերգելեան. մանաւանդ ունի իսկական գիտնականի մեծ յատկութիւնը. ծայր աստիճան համեստ է եւ զիտէ գնահատել

իսկական արժէքները, նաեւ թուարանական մարդէն դուրս. այնպէս որ իր համակրելի բնաւորութեան տակ ծածկած է այն մեծ հռչակը որ իր ետեւէն ստուերի նման կը քալէ: Ու քալած է Երեւանէն մինչեւ Հոռոմ: Ռուսական պատուիրակութիւններու հետ այցելած է նաեւ Հնդկաստան, Չինաստան:

Վենետիկի այս խաղաղ միջավայրին մէջ Փրոֆ. Մերգելեան իսկապէս կ'ըմբռնէր միջավայրին անդորը նուիրակաւորութիւնը. թուարանական հաշիւներու եւ բաղմարարդ գործիքներու մէջ տարիներով թափառող, բայց նաեւ տեսաբանի հայեցողական բնածին ձկնորմներով եւ նկարագրով օժտուած, իսկապէս նոր աշխարհի մը մէջ կը դգար ինքզինքը թէ՛ Վենետիկ, Ս. Ղազարի Հայրերուն ընկերութեան մէջ, թէ նաեւ Հոռոմ, ուր նոյնպէս մեր Միսիթարեան Հայրերը առիթն են ունեցած զինք ճանչնալու եւ հիւրասիրելու:

Կը մաղթենք իրեն նորանոր եւ անընդհատ յաջողութիւններու ոսկեղէն շրջան մը, ի սպաս հայրենիքի վերելքին, ի սպաս բովանդակ մարդկութեան եւ ի սպաս զիտական արժէքներու:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

• ԳՐԱԽՕՍԱԿԱՆ •

ՄԵԾ ԵՂԵՆԻ ՆԱՀԱՏԱԿ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ. – Գրեց՝ Տոքթ. Գ. Մ. Կարոյեան: Տպ. Պոսթոն, 1957, էջ 557, պատկերազարդ: Գին՝ 5 տոլար:

Արցունքով եւ արիւնով հիւսուած դափնեպսակ մը՝ մարտիրոս հայ բժիշկներու նուիրական յիշատակին. յիշատակին անոնց՝ որ անդերեզման անհետացան այս աշխարհէն: Նաեւ սիրոյ ու պաշտամունքի անկեղծ տուրք մըն է այս գործը, նահատակներու արուեստակից կրտսերի մը կողմէ, զետեղուած մեր ազգային անմահներուն պանթէոնին վրայ:

Դժուարին եղած է նաեւ երկունքը այս հատորին. ու կրնանք ըսել թէ հեղինակն ալ ասով քալած է իր աքսորի կեանքը եւ... նահատակուած: Հայրենիք օրաթերթի միջոցաւ տուած բաղմաթիւ կոչերուն մէկ կին միայն հաճած է պատասխանել. դրաւոր թղթակցութիւններէն շատերը մնացած են անպատասխան: Ու ինք զրեթէ միս մինակ տարիներու պրպտումով եւ համբերատար աշխատանքով ի զուրի հանած է այս չքնաղ հատորը, համախմբելով ինչ որ ասդին անդին կար տարողնուած. աւելցուցած է իր ակնանտեսի յուշերն ու խորհրդածութիւնները, մանաւանդ վերջին բաժնին մէջ, որ նուիրուած է հայկական արդի պատմութեան:

Հայ բժիշկներու պատմութեան կոթող մըն էր որ վերջերս հրատարակուեցաւ Իսթանպուլի մէջ, Տոքթ. Ա. Ն. Մեղպուրեանի կողմէ. Հայ եւ ծագումով հայ բժիշկներ, որուն Ա. հատորը 1688-1864ի շրջանը միայն կ'ամփոփէ: Երկրորդ հատորը տակաւին լոյս չէ տեսած: Եւ ահա Տոքթ. Գ. Մ. Կարոյեանի յուշարձանը կու գայ լրացնել այդ պակասը:

Մարտագրեցիկ էջեր կը վերանորոգեն մեր ազգային Գողգոթայի տխուր պատկերը, ուր Սեւակներ եւ Տաղաւարեաններ կ'իշխան կարմիր էջերը գրելով մեր ահաւոր ողբերգութեան:

Հատորը, պատկերազարդ, ամփոփ գիծերով կու տայ իւրաքանչիւր նահատակի կեանքին ու գործերուն վերլուծումը, յաճախ համեմատած՝ անմահներուն պատգամներով: 48 նահատակներու նուիրուած բաժինէն վերջ, կը ներկայանան Համալ-

սարանական հնազոյն բժիշկներ՝ որոնք պաշտօնավարած են Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ. յետոյ կայսերական Բժշկ. Վարժարանի Հայ ուսուցչապետները, հուսկ՝ Հին թէ՛ Նոր աշխարհի հայ բժշկական արժէքներէն ոմանք, ինչպէս նաեւ Հնդկահայ անուանի բժիշկներ: Ամէնէն վերջ, գաղթաշխարհի հայութեան բժշկական շարժումները, ակադեմիկոսները: Այս վերջին մասին մէջ է որ Տոքթ. Գ. Մ. Կարոյեան երկար ընդամեններով իր բուն նիւթէն՝ կ'անցնի պատմական մարդին մէջ, օգտաշատ խորհրդածութիւններով եւ վերլուծումներով:

Վստահ ենք թէ այս հատորը պիտի դառնայ նաեւ բաղմաթիւ ընթերցողներ, եթէ չգտաւ աշխատակիցներ. եւ այս՝ անշուշտ հոգեկան մեծ դոհունակութիւն պիտի պատճառէ հեղինակին:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՖԱՐՄԱՆ ՄԱՆԿԱՆՆ: — Հրտ. Շուշանիկ Նազարեան: – Փոքր ութաձալ, լաքակազմ, 196 էջ: Երեւան, 1957: Գին՝ 6 ռուբլի:

Նախապէս արդէն երկիցս հրատարակուած այս ոտանաւոր հէքեաթը հոս դարձեալ վերստին կը հրատարակուի, սակայն այս անգամ գիտական համեմատութեամբ՝ զանազան ձեռագիրներու եւ ուսումնասիրութեամբ:

Տարակոյս չկայ որ նիւթը պէտք էր վերհրատարակել: Հայերէն հրատարակութիւններէն առաջինը, կատարուած 1724ին, Կ. Պոլիս, այժմ անգտանելի է: Իսկ երկրորդ հրատարակութիւնը Անահիտ ամսագրին մէջ (1904-5) առ հասարակ դժուար է գտնել: Յարգելի հեղինակուհին, Շուշանիկ Նազարեան, կը խոստովանի որ երկու հրատարակութիւններն անմատչելի մնացած են նոյնիսկ իրեն, Երեւանի պէս մատենադարաններով ճոխ վայրի մէջ: Սակայն իր բնագրի հրատարակութեան համար՝ աչքի առաջ ունեցեր է Երեւանի պետական հաւաքման 9 ձեռագիրները եւ Անահիտի հրատարակութիւնը: Դարձեալ իրեն յայտնի եղած է գոյութիւնը Վենետիկի հաւաքման մէջ չորս ձեռագիրներու, որոնք չէ կրցած օգտագործել: Բնական է ըլլալու են ձեռագիր-